ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ Նարեկ, 093435745, narek.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2015թվականի N 6

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$-ի 9-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Նարեկ գյուղական համայնքում 0,01 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխման նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.12.2014թ. N141 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նարեկ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, 03-063-0137-0020 ծածկագիրը կրող 0.01 հա հողամասի հողօգտագործման սխեման:

2.Նարեկ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ծածկագ. 03-063-0137-0020 0.01 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասի նպատակային նշանակությունը փոխել և դասել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիայի՝ կապի օբյեկտների հողերի գործառնական նշանակության դասին:

3. Նարեկ գյուղական համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գ Ամոյան

Պ.Գևորգյան

Ս Սարգսյան

Կ Մովսիսյան

Ս Վարդանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ